

մածուն, և թան. նա և ոչ խոտաքաղ լինել առատութեամբ՝ առ դարմանել զինս և զխաշինս ի ձմեռան, որք են կարեւորք զեղծկական կենաց:

Յամեն յառաջինս յորժամ իսպառ պարագորդ էին բաժինքն Շիրակայ, ածէին անդր արածել զխաշինս, և զխոտ բարձեալ տանէին: Իսկ յորժամ բակ արգելանաց Օգուշարանին սաստկացաւ, և յամենայն տեղիս պահապանք կարգեցան, սկսան ի նեղ անկանել սորա:

Ոմանք ի գիւղորայից՝ որ ի հանդիպոյ Դեօլէի, անցազիր առեալ, երթան յԱպարքոսէ Վարուց հրաման ընկալեալ, անդ երթան խոտաքաղ լինին, և ածեալ զինս առ գետեզերքն: Եւ ապա ընդ Օգուշարանն անցեալ, է որ ի վերայ սառուցից, է որ ձիովք բերին և դարմանեն զկենդանիս, որք են ինքեանց գործ մեծի և դժուարաբուն աշխատութեան, որ տայ յիշել նոցա զաւուրսն զառաջինս:

(Ծանոթութիւն:)

ՀԱՌԻԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ի ԳԱՒԱՌԻՆ

Ե Ր Ն Զ Ա Կ Ո Ւ .

ՅԱՌԱՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ.

Հայրենեաց հնութիւնքն այսօրուան օրս հայրենասէր որդւոց մեծագոյն մասին անձկակարօտ հետաքրքրութիւնն զարթուցած են: Եւ յիրաւի ի՞նչ կայ երկրի վերայ հասկացող սրտի համար առաւել փարայ և նուիրական քան հայրենիք, և ի՞նչ կարող է նորա դաժան վիրաց ու բազմադարեան մղկտացուցիչ խոցերու հանդէպ

աւելի զգալի թուիլ, եթէ ոչ սիրո՞ւն հայրենեաց պանծալի կամողբալի հնութեանց նշխարեալ մնացորդք: Եւր հայրենիքն վշտակոծ Հայաստանն լինելով, թէպէտ և մերթ ընդ մերթ յերևան կհանէ իւր ծոցէն այնպիսի յիշատակարաններ՝ որոց վերայ դրոշմած կտեսնենք իւր արխասիրտ որդւոց կորովաբազուկ քաջազործութիւնները, գիւցազնական սխրազործութիւնները, հայրենասիրական և ազատասիրական անձնանուիրութիւնները, փութաջան և մեծագործ աշխարհաշինութիւնները, և Եռաքելական Ս. Լեկեղեցւոյ կարգաց և կրօնի անաղօտ և անսայթաք պահպանութիւնը. սակայն շատ անգամ այն է՝ որ հնախոյզ աչքերն արտասուք քամելով պիտի նշմարեն այն գետինն ու քարերն՝ ոյք ներկուել առգուել են բիւր անգամ Սէհրուժանեան, Վասակեան, Սարգսեան չարահոգի հայրենանենդ դաւաճանութեամբ և մատնութեամբ միլիոնաւոր ողորմելաց թափուած արեան գետերով, այն շիրիմներն, ու մահարձաններն՝ որոց մէջ կհանդէն անհեռատեսութեան և եսականութեան չար նախանձուն զոհ գնացած հայրենաշէն և աշխարհի օգտակար հոյակապ անձանց աճիւններն, այն կիսակործան շէնքերն, և դժուարանշմար աւերակներն՝ որոց տեարք և բնակիչք, է որ ի դառն գերութիւն վարեալէ որ սովուտանաց, և լուռաղօղ խստամբերութեան անխայելի կրակին մատնուած, և է որ վայրենամիտ վայրագասուն թշնամւոյ արիւնարբու սրոյն ճարակ գնացած, թողել են միայն տխուր աւերակաց կտորներ. այն փառաւոր եկեղեցեաց կանդուն ու կործան շէնքերն ու անթիւ նշխարներն, որոց կոր-

Ծանուցն է բերել աշխարհին հետ միասին ոչ այնքան օտար ազգաց յարձակմունքը և անդուլ արշաւանքը, որչափ ընդ ժամանակս ժամանակս համարին համազգի եղբարց մէջ ճարտարութեամբ և բոլորեղանակութեամբ ինքն, մոլեռանդութիւնն, ընչաքաղցութիւնն, ատելութիւնն, եսականութիւնն, ապօրինի քենախնդրութիւնն, և այն ամենայն չարիք, զորս դիւրաւ կծրանան ի տգիտութիւնն:

Հնութիւնք ստորագրել և ժողովել, հնախօս պատմութեան թերութիւնն և ամբողջութիւնն նկատել ու մթութեանց վերայ լոյս սփռել ասել է. ուստի և այն ազգի հին պատմութիւնն՝ որ կարօտ է հնութեան վկայութիւնն մօտն ունենալ՝ բայց չունի, չէ կարող այնքան յարգ և վարկ վաստակել:

Հնութեանց նշանակութիւնն ժամանակէ ի վեր յարգի եղած է մեր ուսումնական ազգայնոց մօտ. և ոմանք իսկ ներկայ դարուս աշխատասէր անձինքներէն այդ օրինակ գովանի ծառայութիւնն ցոյց տուած են ազգին և ազգային զրականութեանն. իսկ Աւրոպա՝ որ մեզմէ շատ և շատ յառաջ զգացած է նոցա ծանրակշիռ յարգն և նշանաւորութիւնն, մեզմէ նմանապէս և շատ յառաջ բազմաթիւ արեւելախոյզ ուսեալ ճանապարհորդներ և հնասէր անձինք մեծագումար զոհիւք զրկած ու հաւաքած ունի արեւելից հրնութիւնքն մանաւանդ մերս Հայաստանի՝ որ նորա աչքը կհամարուի, և այսօր իւր յայտ եկած ճոխ հնութեանց անապառ գանձիւք զարմացրել է զնա: Այժմ յիշատակեալ օտարազգի և Հայազգի բնախոյզ, բանասէր, հնասէր, և տոհմագիր

անձանց քրտամբք մեր մայր աշխարհի շատ գաւառաց և նահանգաց հնութիւնք և ազգի ազգի տեղեկութիւնները ապահովւած են ժամանակի կորստեան վտանգէն, բայց դեռ քանի կողմանք կան զրկուած այդ բաղդէն, որոց հետ և Ասիականի գաւառը, որք մինչև այսօր այցելուի մի չէ հանդիպեցան, որոնք կարող լինէին մերկանալ իւրեանց ցարդ խնամօք պահած պատմական հազարաւոր հնութիւններն:

Յիշատակելոց վերայ իբրև շատից հրնութեանց ականատես կհրաւիրեմ անձանձիր աշխատասէր համազգեաց ուշադրութիւնն. իսկ ես այս աշխատութեամբն ինչպէս և վերնագիրն ցոյց կտայ, պիտի ջանամ երևան հանել միայն Արեւմտեան գաւառի հնութիւններն, որ ոչ սակաւ նշանաւոր տեղ բռնած ունէր ժամանակին մեր պատմութեան մէջ: Այսուիմք միայն, որ չյաջողեցաւ մեզ ըստ մեր բաղձանաց կցել սորա հետ պէտք եղածին չափ տոհմագրական և բանասիրական տեղեկութիւնները այս գաւառի սակաւաթիւ գիւղորդից բնիկ գաղթական բնակչաց վերայ:

Արեւմտեան Աշխարհի Սեպտեմբերի

Ռոբերտ Ս. Լեֆաշի.

1870 թ. 1870 թ.

Սեպտեմբեր:

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՒԱՐՈՒ.

Հին Հայաստանի աշխարհագրական բաժանման համեմատ, Արեւմտեան գաւառ մեծին Հայոց հնգեդասան նահանգաց տա-

ներորդին՝ այն է Սիւնեաց տասներկու
գաւառներէն մէկն է *):

Սահմանք.

Սահմանք գաւառիս են. յարեւելից Ծը-
ղուկ գաւառ (Սիսիան), յարեւմտից և ի
հիւսիսոյ գետն՝ Նախիջևանի, և ի հարա-
ւոյ՝ Ղոզլութն գաւառ:

Գէո.

Այս գաւառն մի միայն գետ ունի հա-
մանուն, որ սկիզբն առնելով Ծղկեաց
լեռներէն, ջուղայի մօտ կիսառնուի Ա-
րասիսին:

Լեռնք.

Լեռներն են սոքա. ի սահմանակցու-
թեան Ծղուկ գաւառի՝ Ծղկեաց բարձ-
րաբերձ լեռինքը. Շահկերտի դիմաց՝ Սեղ-
րաքար (Բալլը-դայա) կոչեցեալն. յարե-
ւմտից նոյն աւանի՝ Երնջակաբերդ, որ նը-
շանաւոր է պատմութեան մէջ ըստ բազ-
մադիմի անցից. ի հարաւոյ Վառնայի, և ի
սահմանակցութեան նորուն՝ Խան-դաղը,
(Օձալեռն), իսահմանակցութեան Ղոզ-
լութն գաւառի՝ Վարուդաղ կոչուած լեռ-
ներն:

Բերք.

Երնջակ գաւառը Նախիջևանի մասն
լինելով, նորա նման իւր արգասաւոր ծո-
ցէն յառաջ կբերէ և կպարգեւէ ժիր մշա-
կին տեսակ տեսակ առատ բարիքներ, բաց
ի քանի մի լեռնային մասերէն, որոց ցուրտ

կլիմայն ներհակ է ջերմով աճեցող բերոց:
Երկրագործութիւն տեղւոյս բաւական
մշակուած լինելով կտանայ առատ և մա-
քուր տեսակի ցորեան, գարի, բամբակ,
հաճար, քնջիթ, կտաւհատ, սեխ, ձմե-
րուկ, վարունգ ևլն. ծառապտուղներէն
կգտնուի ընտիր ծիրան, տամոն, սալոր,
դեղձ, տանձ, խնձոր, ընկոյզ, սերկեխ,
կաղին, ևլն. Ապրակունիսի մէջ կը նշմար-
ւին նաեւ պտղատու նշենի, թզենի, և նրո-
նենի: Այդիք շատ կան, միայն մշակելոյ
եղանակն ամեն տեղ չգիտեն լաւապէս,
մանաւանդ գինի պատրաստելն: Հայաս-
տանի դաշտաց և լեռանց մէջ գտնուած
ընտանի և վայրենի անասնոց, զաղանաց,
թռչնոց, և սողնոց գրեթէ տեսակներն կը
գտնուին և այստեղ:

Հանք.

Այս գաւառիս մէջ մինչև ցայժմ յայտ
եկած հանքերն են ոսկի, արծաթ, պղինձ,
կիր, գիպս (գաճ), կայծքար, ջրաղացա-
քար, ածուխ, և գիւ. ուստի կգտնուին
շատ տեղեր և տեսակ տեսակ հանքային
ջրեր:

Գեղորայք.

Երնջակայ մէջ գտնուած գիւղորայքն
են. Ապրակունիս, Վառնայ, Բանանեար,
Սալթաղ, Նորաշէն, Խոշկաշէն, Գեաղ,
Փորագաշտ, Շօռութ, Խանաղա, Ղա-
զանչի, Ներքին, Միջին և Վերին Ան-
ղուրներ, Թէյվաղ, Արաւիս, Միլաւ,
Խաչափարախ, Ղզլձա, Ջամալդին, Ջու-
ղայ, Արաղին, և Վղնուտ: Իբրև յիշատա-
կութեան անարժան կթողումք մէք Արա-
ւիս և Միլաւ փոքրիկ և աննշան գիւղերը,
իսկ միւսոց վերայ կսկսեմք խօսել կար-

(*) Կարագետ Վ Շահնազարեան իններորդ
ըստ կարգի կղնէ զՍիւնիս. տես նորա լոյս ընծա.
Օրպնեան Պատմ. երես 5:

գաւ, բայց ամենէն յառաջ Ապրակունիսի մէջ գանուած նշանաւոր մենաստանին վերայ, որ յանուն Ս. Կարապետին:

ՎԱՆՔ Ս. ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵՐԵՋԱԿՈՒ:

Հայաստանի հռչակաւոր վանքերէն մինն է և այս, յանուն Ս. Կարապետի, Ապրակունիս գիւղի մէջ, Նախիջևան քաղաքէն չորս ժամու ճանապարհաւ կամ չորս մղոնաւ հեռի:

Այս մենաստանի հիմնարկութեան թրւականն ազգային պատմադիրներէն չկարացաք գտնել որչափ և հետամուտեղաք. դուցէ միայն այնպիսի ձեռագիր յիշատակարանների մէջ գտնուի, զորս մեք չկարացաք տեսնել. բայց հաւանած եմք ասել, որ այս մենաստանը պիտի շինուած լինի մետասաներորդ դարու վերջերը. ըստ որում պատմութեան մէջ կգտնեմք սորա նորոգուիլն չորեքտասաններորդ դարու մէջ այսինքն յամի 1381 ընդ ձեռն Սաղաքեայ վարդապետի Ղլիմեցւոյ. իսկ հընոց ամուր շինութիւնները և վանօրէից վերայ դործ դրած ճարտարապետական ընտիր և կիրթ ճաշակն ի նկատի ունելով, չէ կարելի չկարծել թէ բաւական ժամանակ անցած պիտի լինի շինութեան վերայ, որ կարօտած է նորոգութեան: Չամչեան մեծարդիւն Հ. Սիքայէլի պատմութեան մէջ յամի 1330, Ունիթուաց ծագման պատմութեան աթիւ կ'ընդունի և Ղլիգոր Վարդապետ ոմն Ապրակունեցի իրր համախոհ նոցին. և Ապրակունեցի բառովն պէտք է հասկանալ այս մենաստանի մէջ եղող վարդապետ. վասն զի ցարդ ևս վանքն սովորաբար «Ապրակունեաց վանք», կրկնուի, և մէջի գտնուած կրօնաւորը կամ վարդապետը «Ապրա-

կունեաց վարդապետ», և Եթէ ունիթուաց պատմութիւնն չլինէր, գուցէ դեռ շատ անապան յիշուէր պատմութեան մէջ այս մենաստանը, ինչպէս նաև շատերը: Հաճիսթունեանց բաղմարդիւն Յովհաննէս Եպիսկոպոսն, ինչպէս և ոմանք հաւանած են ասել իրր թէ առաջին մենաստանն Երնջակայ եղած է Երնջակամրոցի մօտ յանուն Ս. Գէորգայ. իսկ «Եսայի վարդապետ իսպառ լքեալ զայն՝ զայս տեղի և նորոգ հիմնարկութեամբ տայ կառուցանել փառացի տաճար ի կոփածոյ քարանց յամին 1551, յանուն սրբոյն Յովհաննու Կարապետի», (տես ընտորագ. Կաթ. Խճմ. և հինգ զաւառացն Երարատայ. Աշխ. Յովհ. Եպիսկոպոսի Հաճիսթունեանց. հատ. Բ. եր. 319): Այս կարծիքն չէ և իմր. և ես ընդհակառակն կրպնդեմ, որ յիշատակեալ Ս. Գէորգ անուն մենաստանն (որոյ համար տես ի ներքոյ) կարող էր վանք Երնջակու համարուիլ քանի որ համանուն զաւառին մէջն է, բայց ոչ աւելի հին և նշանաւոր քան այս ներկայս, որ կկոչուի յանուն Ս. Կարապետին. ընդհակառակն դեռ Ս. Գէորգ անուպատի անունն պատմութեան մէջ չտեսած, և դեռ չկարդացած որ Եսայի վարդապետն է շինած վերջինս յանուն Ս. Կարապետին, կգտնեմք զայն չորեքտասաներորդ դարու մէջ նորոգուած ընդ ձեռն Սաղաքեայի Ղլիմեցւոյ, և այնուհետեւ իրր ժամանակի երեւելի մենաստաններէն մինն երեւելի անձանց բնակարան եղած. մանաւանդ որ Եսայի վարդապետէն բաւական յառաջ ծագած Լատինա-Հայ Ունիթուաց շիթութեանց ժամանակը այստեղ «Ապրակունիսի մե-

նաստանիս, մէջ զօրացած և զինուոր-
ւած կտեսնեմք Որոտնեցին, Տաթևացին,
և այլք, և ոչ ուրիշ տեղ: Աթէ արդա-
րեւ յանուն Ս. Պօղոսայ եղած վանքն՝
չէն էր այս միջոցներին մինչև ցԱսայի,
անշուշտ պատմութեան մէջ պիտի տես-
նէինք նորա առաջնորդաց կամ կրօնաւո-
րաց անուններն և արարքն:

Յիրաւի երկրի բնիկ բնակչաց աւանդու-
թիւնն ցարդ ևս կենդանի մնացած է, որ
այս մենաստանն փոխադրուած կհամարէ
այս տեղ, բայց միևնոյն աւանդութիւնն
ցոյց կտայ և առաջին տեղն՝ « Էին վան-
քատեղ, կոչելով զայն՝ որ կանկանի մե-
նաստանիս հիւսիսակողմն գրէթէ քառորդ
վերստ հեռի անտի փոքրիկ բլրակի մի վե-
րայ, որոյ վերայ դեռ կան նաև նշմարելի
աբդարեւ հետք հիմանց շինուածոց, և շատ
հաւանական է որ ժամանակին հանգա-
մանքը կամ գրից անյարմարութիւնն տե-
ղափոխութեան տեղիք տուած լինին: Ինչ-
պէս մենաստանիս գլխով անցած անցքե-
րէն շատ քիչը հասուցել է մեզ պատմու-
թիւնն, նմանապէս և նորա Առաջնորդաց
կամ Աշնահարց կամ դոնէ ի նմա բնակ-
ւած նշանաւոր անձանց սակաւուց ոմանց
միայն անուններն:

Չորեքտասներորդ դարու մէջ այսինքն
յամի 1376 կերեւի Առաջնորդ վանիցս
Սարգիս վարդապետ ոմն. սորա օրովն կը-
տեսնեմք բնակուած այս մենաստանի մէջ
Մաղաքիա վարդապետ Ղրիմեցին նորո-
գող վանիցն, և Յովհաննէս Որոտնեցի
Պախիկ մականուանեալն, որդի Իւանեայ
իշխանի, աշակերտ Ասայիսայ վարժապետի
Նչեցւոյ, որ ձգելով Տաթևի վանքն, ու
հեան առնելով շատ մի կրօնաւորներ կղայ

այս տեղ, և աջակցեալ Սարգիս ու Մա-
քիա վարդապետաց՝ կաշխատեն ողորմելի
ժողովուրդն պաշտպանել բանասրկուի չա-
րութեան գործիք — Ատինահայ Ունի-
թոռաց բորբոքած աղգաւեր հրդեհէն:
Ջարմանք բան. Է. Միքայէլ Չամչեան
ինչպէս չիղձահարի ճշմարտութեան գէմ՝
մեղանչելով ջանալ ցոյց տալ կամ հաւա-
տացնել որ Որոտնեցին, Տաթևացին, Սար-
գիս և Մաղաքիա վարդապետք ևս համա-
միտ և համակամ էին Ունիթոռաց խոր-
հրդոցն և վարդապետութեանցն. ըստ իս՝
եթէ սեաւ դոյնն Էռովմայ գահին կամ Է.
Միքայէլին տխորժելի գոյն մի լինէր, ան-
կարծիք պատմութեան մէջ քսան տեղ,
և իւրաքանչիւր տեղն ամբողջ գլուխներ
պիտի կարգէր ու մրէր մածովի սև լինելն
ապացուցանելոյ համար:

Մաղաքիայի վանքը նորոգելէն զնի,
Յովհան Պախիկ Որոտնեցի կնատի Առաջ-
նորդ վանիցն, և ժողովելով աշակերտներ
կուսուցանէ ինքնին. իսկ Սարգիս վարդա-
պետ կկարգուի Առաջնորդ Աստապատի
վանուցն, և Մաղաքիա վարդապետ Փո-
րաղաշտ գիւղն եղած միջոցին յանկարծա-
մահ կմեռանի, որոյ համար Չամչեանն կը
գրէ « Եւ համբաւ թէ Ունիթոռք դեղ-
եալ իցեն զնա, » (հատ. Գ. գիրք Թ.
գլ. Գ. եր. 449), իբր թէ շատ հեռի էր
ի նոցունց արապիսի ոճիր մի:

Յամի 1388 կը մեռանի և Յովհան Ո-
րոտնեցի և կթաղուի Մաղաքիայի մօտ,
որոց դերեղմանաց ուր լինելն պիտի տես-
նեմք ներքեւ. Որոտնեցւոյ տեղն կյաջոր-
դէ նորա աշակերտ Ղրիգոր Տաթևացին,
որ իւր վարդապետի շաւղացն հետեւելով
կժողովէ ուխտին մէջ շատ աշակերտներ և

կուսուցանէ, որ և յետոյ ժամանակի վեր-
դովմանց երեսէն Ստաթէի վանքը քաշ-
ւելով կմնայ անդ երկար ժամանակ, ուր
և կմեռանի, ուստի և կոչուեցաւ Տաթե-
ւացի:

Յետ Գլխորդի Տաթեւացւոյ մենաստա-
նիս առաջնորդաց յաջորդութեան կարգը
և անուանքը կճածկուին անյայտութեան
մէջ մինչև ցամա 1654, յորում կերեւի
Լսայի վարդապետ Սեղբեցի որ կնորո-
գէ զտաճարն, գործակցութեամբ Գլազար
վարդապետի ուրումն: Յետ Լսայեայ յա-
ջորդողների անուանքն դարձեալ անյայտ
կմնան, կերեւի միայն յամի 1738 և ազգա-
կան ՌՆՂՆ Մկրտիչ շուշտակ Լպիս-
կոպոս, եղբայր Գլազարու Զահկեցւոյ:
Ապա կուգան, Կարապետ վարդապետ
Նախիջևանցի, յետ Կարապետի Սատ-
թէոս Լպիսկոպոս Նախիջևանցի, յետ
Սատթէոսի Փիլիպպոս եպիսկոպոս, յետ
նորա Կարապետ վարդապետ Ի. և յետ
նորա Լընմիա վարդապետ Սեղբ-Թան-
գեանց Սիւնեցի: Սոցա՝ յորում ամի և մին-
չեւ ցերբ պաշտօն վարեն, նոյնպէս ինչ
գործ տեսնելն չկարացաք հաւաքել բաց ի
վերջնոցն. իսկ անուանքն քանի մի հին
ու նոր կոնդակներէ և նամակներէ առինք:

Լընմիա վարդապետ դեռ ի կենդանու-
թեան Կարապետի կարգուելով Վանա-
հայր ուխտիս, և մինչև ցամա 1865, այն է
մինչև ցմահ վարելով պաշտօն, մեծ յարգ
և վարկ կվաստակէ շրջակայ ժողովրդակա-
նաց մէջ, և իւր մեծամեծ ու գովելի վաս-
տակօքն, սրտեռանդ ծառայութեամբն,
ու ազգի ազգի շինութեամբքն, շնորհակա-
լեաց արժանի է: Եւ թէպէտ շինուածոց
մէջ չի տեսնուի բնաւ կիրթ ճաշակ, բայց

որ դոնէ նա իւր կարողութեան չափ ջա-
նացել է պայծառացնել մենաստանն, քան
քանդել զայն, և եղբարց ու ազգականաց
աները լցնել, խանութներ բանալ և ին.,
ամենայն իրաւամբ պիտի գովեստներ առ-
նու, և առած է: Այս մենաստանի դիրքը
կանկանի դիւր տեղ մի, և իւր չորս կողմը
նայողի աչքի առաջ կրերէ գեղեցիկ և ծի-
ծաղկոտ տեսարան. հողապատ պարիսպ մի
բրգաւոր կպատէ զնա. արեւելեան պարսպի
տակէն կանկանի մեծ առու մի, ուստի կը
վազէ կանցնի մունչալով և դղմամբ դարնան
յորդ անձրեւներէն երբեմն երբեմն բարձ-
րացած հեղեղ զայրազին:

Շինութիւն տաճարին սագաշէն, կո-
փածոյ քարամբք և գեղեցիկ ճարտարու-
թեամբ. կաթուղիկէ մի բարձր և վայելուչ
կերպով կանգնած ի թրծեալ աղիւսոյ,
աւելի շուք կրերէ տաճարին. ունի երկու
դուռն՝ արեւմտեան և միւսն հարաւային.
եզերք արեւմտեանին զարդարած են ազնիւ
քանդակագործութեամբ. երկայնութիւն
տաճարին է 23 քայլ, և լայնութիւնն 19.
Թաղակապ տանիք եկեղեցւոյն կաթուղի-
կէիւ հանդերձ հաստատուած է չորս մե-
ծամեծ սեանց վերայ. ունի սեղան պատա-
րագելոյ մի միայն, և երկու աւանդատուն,
որոց ամեն մէկի վերայ դարձեալ մի մի վեր-
նատուն. աջակողմեան աւանդատան կամ
խորանի մէջն էր պահուած՝ Օրհնանքա-
հոլը, որ միւսնոյն դրսի հասարակ հոլն է,
բայց ծածուկ լցուած այստեղ կբաժան-
ւէր պարզամիտ ուխտաւորաց վերայ, իբր
սպեղանի զօրեղ. ճարտար խորամանկու-
թիւնն և շահասիրութիւնն ինչեք առնել
չի տայ: Չախակողմեան խորանն է պահա-
րան մասանց սրբոց, այս խորանի յատակը

աղիւստալ կաղմել տալու ժամանակն հանգուցեալ Արեւմիա վարդապետն տեսած է դուռն մի գաղտնարանի, ուստի անցնելով մինչև բուն սեղանոյ տակն, գտած էր բաւական ձեռագիր մատեաններ, թերևս և ուրիշ անօթեղէններ կամ զարդեր: Իւրաքանչեւ խորանի դրան ճակատին դրուած է մի մի փոքրիկ գեղաքանդակ խաչքար, և իւրաքանչեւն ի պատուանդանի խաչին ունի արձանագիր, —

Զախակողմանն է այս. « Սուրբ խաչս յիշատակ է Տէր Ազարիա Ապիսկոպոսին և ծնողաց նորին հաւրն Աթուղաշին, և մաւրն Փայխաթունին յիշեցէք ի Վրիստոս. թվին ԶԻԴ, . իսկ աջակողմեանն է.

« Ս. Խաչս բարեխօս առ Վրիստոս Մահտեսի Արապկոսի և ծնողաց Շահունին թվին ՈՒՆԳ, . : Ակեղեցւոյ մէջն նկարուք զարդարուած է եղել, որոյ մնացորդքն սեղանոյ տանեաց և կաթուղիկէի վերայ կարտափայլեն ոչ բոլորովին անկիրթ ճաշակ. իսկ մնացեալ տեղերն ծածկած է սպիտակ սուաղ : Բաց ի յիշատակեալ արձաններն, նաև արտաքուստ երկու խաչքարանց վերայ եղեալ կայ գրութիւն. առաջին արձանագիրն է արեւմտեան որմոյ ճակատին լուսամտէն բարձր հաստատուած խաչքարի պատուանդանի վերայ այսպէս.

« Ասայի և Ղազար վարդապետ շինողք թվ ՈՒ, . և միւնոյն խաչի թեոց մէջ տեղը այսպէս. « Թվ. ՈՒՂԷ, . : Երկրորդ խաչքարն է հիւսիսային որմոյ վերայ լուսամտէն բարձր հաստատուածը, որ ունի այս « Ասայի վարդապետ շինող. թվ. ՈՒՂԷ, . : . . .

Ունեցած է այս տաճարն յարեմաից կուսէ դաւիթ փոքրիկ քարամբք և թըր-

ծած աղիւսով շինեալ. այժմ միայն դաւթի կամարաց հիմունքը կամ բարձքը կը նշմարուին չորս տեղ. երկու բարձքի վերայ հանգուցեալ Արեւմիա վարդապետն շինել տուած է կոփածոյ քարամբք փոքրիկ զանգակատուն, որ ոչ միայն թերի մնացած է իւր մահուամբն, այլ քարերի կրանիւթ լինելուն պատճառաւ այժմ կործանման վտանգի մէջ է. ի հարաւոյ կրցւած է տաճարիս մատուռ մի փոքրիկ երկարաձև յանուն Ս. Ստեփաննոսի, նոյնպէս կոփածոյ քարամբք և վայելչակերտ, յիշատակ Շօռութեցի Խօջայ Այվազին. որոյ յիշատակագիրը ինեքս մատուան կամարի երկու ծայրերին գրուած է կարմիր դեղով այսպէս.


« Ի թուոյ աղինս մեր Հայկի,
Հազար հարիւր վաթսուն և երեքի.
Խօջայ Այվազն գովելի,
Յոյժ բարեպաշտն ցանկալի.
Տեղեալ գորով Շօռութեցի,
Շինեաց տաճարս այս նազելի.
Յանուն Ս. Ստեփաննոսի
Նախավկային մարտիրոսի.
Իւրն յիշատակ է միշտ կենդանի,
Որով Վրիստոս պատարագի.
Մասն և բաժին իւրբն լիցին,
Իւ ծնողացն Մկրտչին և Սատարին.
Իւ կողակցին Թառիկին, և
Վեոցն Աննայուն և Փառանկուն.
Իւ Ղատերացն և իւր տան
Արքանեակն է Մարգարիտն,
Չոր Տէր Աստուածն ամենայնի,
Չինքն ի ցասմանց անփորձ պահի.
Երկար կենօք յայս աշխարհի,
Պայծառ փառօք ի յատենի.
Աթոռս մեծին Յովհաննիսի,

Իւրն օգնական միշտ լինիցի.
 Թէ առաջնորդ Թէ միաբանք,
 Եւք յԱյլազէն շնորհակալ :
 Այս մատուռն Ս. Ստեփաննոսի ունի
 Իւր տանեաց վերայ հաստատուած երկ-
 յարկ զանգակատուն. առաջին յարկն քա-
 ըաշէն յիշատակ Նախիջևանցի Աղամա-
 լին, որոյ արձանադիրն դրուած կայ արեւ-
 մտեան հարաւոյ սեան ճակատին այսպէս.

« Յիշատակ է զանգակատունս Նախ-
 չուանցի Աղամալի որդի պարոն Աղամա-
 լին Ի ՍՏՊԻ Թուին , . երկրորդ յարկն
 կանգնեալ յաւուրս Լէրեմիայ վարդապե-
 տի Թրժած աղիւսովք, յիշատակ է Տու-
 շեցի բարեպաշտօն Արապետ աղայի Շահ-
 մուրատեան. որ և ունի յարեմտեան որմն
 զանգակատան ագուցեալ փոքրիկ մարմա-
 ըիոնի վերայ Իւր յիշատակագիրը :

— զիշատակ (ն-ր-ն-իւն)

ՏԵՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ.



Ներքին երևոյի աղբի լինական տանց Հայապատնի: